«ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ»
ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ – 2026

23 ապրիլի, 2026 թ.

Կազմակերպման և անցկացման կարգը

1. 2026 թ. ապրիլի 23-ին կկայանա **«Տեխնոլոգիական նորարարությունների դերը կրթության մեջ»** թեմայով **ուսուցչական մարզային համաժողովը:**

Համաժողովում որպես զեկուցողներ կամ խոսնակներ կարող են հանդես գալ հանրակրթական դպրոցների տնօրենները, տեղակալները, ուսուցիչները, փորձագետներ, համայնքների և կրթության ոլորտի այլ ներկայացուցիչներ:

2. .Նպատակները

- Ստեղծել համագործակցային հարթակ ուսուցիչների, կրթության կազմակերպիչների, կրթության ոլորտի մասնագետների և նորարարությամբ զբաղվող փորձագետների համար՝ կրթության մեջ տեխնոլոգիական նորարարությունների կիրառման լավագույն փորձի փոխանակման նպատակով:
- Քննարկել կրթական գործընթացում թվային գործիքների, արհեստական բանականության, առցանց հարթակների և այլ նորարարական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման հնարավորությունները՝ ուսուցման որակի բարձրացման և սովորողների ներգրավվածության խթանման համար:
- Ներկայացնել դպրոցներում կիրառվող նորարարական կրթական մեթոդներ և տեխնոլոգիական լուծումներ՝ նպաստելով ուսուցման գործընթացի արդիականացմանը և ստեղծագործական մոտեցումների տարածմանը:
- Խթանել ուսուցիչների մասնագիտական զարգացմանը՝ տեխնոլոգիական նորարարությունների կիրառման հմտությունների կատարելագործման և ժամանակակից կրթական միջավայրի ձևավորման նպատակով:

Համաժողովի նախընտրելի ձևաչափը ընտրում է մենթոր դպրոցը՝ պլենար նիստ, աշխատարաններով զեկուցումներ, պանելային քննարկում, կլոր սեղաններով քննարկումներ:

3. .Ուղղությունները

Բաժին 1 - «Ավագ դպրոցներում արհեստական բանականության ուսուցման ծրագրեր»

Բաժին 2 - «Դպրոցահասակ երեխաների արտադպրոցական տեխնոլոգիական կրթություն»

Բաժին 3 - «ԱԲ կիրառումը դասավանդելու և սովորելու գործընթացում»

Բաժին 4 - «Տեխնոլոգիաների կիրառման ռիսկեր, էթիկական խնդիրներ»

Բաժին 5- «Կիբերանվտանգություն և թվային գրագիտություն»:

4. Համաժողովը իրականացվելու է միաժամանակ 47 մենթոր դպրոցներում, որի պատասխանատուն և համակարգողը մենթոր դպրոցի տնօրենն է, ով պետք է կազմակերպի համաժողովի անցկացման ողջ գործընթացը՝ համագործակցելով ԿԶՆԱԿ-ի հետ:

5. Մենթոր դպրոցների տնօրենները պատասխանատու են մասնակիցների իրազեկվածության, իրենց կից դպրոցների կողմից ներկայացված՝ համաժողովի ուղղություններին համապատասխան թեմաների և նյութերի հավաքագրման ու ընտրության, համաժողովի անցկացման մասին հայտարարություն հրապարակելու, մասնակիցներին ներգրավելու, համաժողովի անցկացման և գրավչության ապահովման համար, որի մասին նախապես պետք է տեղեկացնեն ԿԶՆԱԿ-ին:

6. Կարևոր է զեկուցումների թեմաներն ընտրելիս հաշվի առնել.

- Թեմայի համապատասխանությունը նշված ուղղություններին.
- Զեկուցման ինտերակտիվ ձևաչափը.
- Զեկուցման մեջ նորարարության առկայությունը.
- ՀՊՁ-ի բովանդակային սկզբունքների արտացոլումը զեկուցման մեջ.
- Զեկուցման մեջ սեփական փորձառության արտացոլումը.
- Զեկուցման առանցքային հարցերը ներառող սահիկաշարի համապատասխանությունը սահիկաշարին ներկայացվող պահանջներին (սահիկաշարերում ներառել ԿԳՄՍՆ և ԿԶՆԱԿ լոգոները):

7. Համաժողովի համար սահմանվում է հետևյալ օրակարգը.

- **Բացման խոսք**. համաժողովի պատասխանատուն մասնակիցներին ներկայացնում է համաժողովի գաղափարը, նպատակը և անցկացման ընթացակարգը: Կարող եք հրավիրել նաև հյուրեր, ոլորտի մասնագետներ:

- **Աշխատանք աշխատարաններում.** Աշխատարաններում յուրաքանչյուր զեկուցման և քննարկման համար հատկացվում է մինչև 15-20 րոպե ժամանակ (քննարկումը կարելի է իրականացնել նաև աշխատարանի բոլոր զեկուցումները լսելուց հետո):
- **Ամփոփում.** համակարգող պատասխանատուն ամփոփում է համաժողովը:

8. Աշխատարաններից բացի՝ այլ ձևաչափ (օրինակ՝ պանելային քննարկում, կլոր սեղան և այլն) ընտրելու դեպքում սահմանել օրակարգը՝ ըստ ընտրված աշխատանքների բնույթի:

9. Համաժողովի օրակարգը նախապես ներկայացնել ԿԶՆԱԿ: Համաժողովին հնարավորության դեպքում կմասնակցեն նաև ԿԳՄՄՆ և ԿԶՆԱԿ ներկայացուցիչներ:

10. Համաժողովի անցկացման վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակել դպրոցի կայքում և/կամ սոցալական հարթակներում:

11. Մենթոր դպրոցի տնօրենը համաժողովի խոսնակներին կարող է տրամադրել տեղեկանք կամ հավաստագիր՝ ըստ անհրաժեշտության:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ